ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

27.01.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Հ.Ավետիսյանը - մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Աշրաֆյանը - մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Ա.Մատինյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Գ.Բաղդասարյանը, Ա.Մալոյանը, Գ.Մելիքսեթյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը ներկայացրեց նախորդ խորհրդակցության ժամանակ տրված արձանագրային հանձնարարականների կատարման վերաբերյալ իր դիտարկումները և հանձնարարականների կատարման նկատմամբ պատասխանատու անձանց և ստորաբաժանումների ղեկավարների կողմից իրականացված աշխատանքների գնահատականը, մասնավորապես իր դժգոհությունը հայտնեց մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանի, առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանի, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Մատինյանի և մարզպետի օգնական Հ.Հակոբյանի կողմից հանձնարարականների պատշաճ կարգով չկատարման, կամ ոչ պատշաճ կատարման, ժամկետների խախտման, տրված հանձնարարականներին մակերեսորեն վերաբերվելու և հաշվետվություններ չներկայացնելու վերաբերյալ:

2. Մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանը ներկայացրեց արձանագրությունով տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն, նշելով, որ դրանցից՝ Աղետի գոտում իրականացված աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը կազմվել է, սակայն չի ներկայացվել սահմանված կարգով, համապատասխան ստորաբաժանման հետ քննարկվել է 2025թ. սուբվենցիոն ծրագրերի փաթեթները, որի վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև Լոռու մարզի բնակարանային

խնդիրներ ունեցողների հաշվետվությունները՝ նույնպես չեն ներկայացվել սահմանված կարգով և ժամկետներում:

3. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյան ներկայացրեց 2025թ. սուբվենցիոն ծրագրերի հայտերի ներկայացման վերաբերյալ տեղեկատվություն՝ հայտնելով, որ Լոռու մարզի համայնքներից առ այսօր ՏԿԵՆ են ներկայացվել ընդհանուր թվով 15 ծրագրեր, որոնց վերաբերյալ որպես չափանիշ է ընտրված համայնքների առաջնահերթությունները և ծրագրերի կարևորությունը:

Այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են և համայնքների հետ, և համապատասխան կառույցների հետ:

Ներկայացված հարցի վերաբերյալ մարզպետը հանձնարարեց անմիջական հսկողության տակ պահել գործընթացը, կրկին անգամ ուսումնասիրել 2025թ. սուբվենցիոն ծրագրերի փաթեթները՝ ըստ առաջնահերթության և կարևորության, և համապատասխան աշխատանքներ տանել համայնքների ղեկավարների հետ ծրագրերի շուտափույթ ներկայացման ուղղությամբ, հաշվի առնելով ծրագրերի առաջնային կարևորությունը՝ համայնքային խնդիրների լուծման գործում:

4. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանը ներկայացրեց տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ պարզաբանումներ՝ նշելով, որ ներկայումս վարչության կողմից իրականացվում են 2 կարևոր ուղղություններով աշխատանքներ՝ այն է՝ համայնքների բյուջեների վերլուծությունները և արտահանված ավտոմեքենաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը, որը վերջնականապես կհստակեցնի սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների սահմանումը և դրանց կատարման ապահովումը:

5. Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանը ներկայացրեց տրված հանձնարարականների և կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, որի վերաբերյալ մարզպետը հայտնեց իր դիտարկումները, մասնավորապես՝ բնակչության հետ տարվող աշխատանքների, դրանց վերաբերյալ լուսաբանման ուղղությամբ, հանձնարարեց՝ որպեսզի քաղաքացիների կողմից բարձրացվող սոցիալական խնդիրների համակողմանի ուսումնասիրության և դրանց լուծման ուղղությամբ հանդիպումները լինեն հաճախակի, տարբեր ձևաչափերով, առարկայական, դրանց վերաբերյալ ներկայացվի ամբողջական, հստակ տեղեկատվություն և պատշաճ լուսաբանվի: Նա հանձնարարեց նաև անակնկալ այցեր իրականացնել բժշկական կազմակերպություններ, առկա խնդիրներն արձանագրել և դրանց արդյունքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

Մարզպետը նույն բովանդակությամբ հանձնարարական տվեց նաև աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Մատինյանին, պահանջելով՝ որպեսզի այցերի և ստուգումների ժամանակ ուսումնասիրվի հիվանդների, բացակայությունների, ուսման պայմանների և որակի վերաբերյալ տեղեկությունները:

6. Մարզպետի խորհրդական Ն.Թովմասյանը ներկայացրեց Լոռու մարզպետի հետ իրականացրած շրջայցերի ժամանակ քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների լուծման ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես՝ տրանսպորտային ծառայության հետ կապված,

Վանաձորի բազմաբնակարան շենքերի վերելակների և շենքերի տանիքների վերանորոգման և այլ հարցերի վերաբերյալ:

Մարզպետը հանձնարարեց բարձրացված ցանկացած հարցի լուծման ուղղությամբ իրականացնել անհրաժեշտ աշխատանքներ, տեղում ուսումնասիրել բարձրացված հարցերը պատասխանատու պաշտոնատար անձանց հետ, դրանց լուծման վերաբերյալ ամենօրյա պարբերականությամբ ներկայացնել տեղեկատվություն:

Մարզպետը հանձնարարեց մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին՝

2-օրյա ժամկետում գույքագրել և ներկայացնել տեղեկատվություն մարզում առկա բազմաբնակարանային շենքերի վերելակների վերաբերյալ, մասնավորապես առանձնացնելով՝ գործող, չգործող, վերանորոգման կամ փոփոխման կարիք ունեցող վերելակների վերաբերյալ՝ ըստ հասցեների, ինչպես նաև, տանիքների նորոգման կամ վերակառուցման, միջհամայնքային երթուղիները սպասարկող տրանսպորտային միջոցների գործունեության և համայնքներում աղբահանության պատշաճ իրականացման վերաբերյալ:

7. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Ռ.Մարգարյանին՝

1). 2-օրյա ժամկետում ներկայացնել սուբվենցիոն և պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն. մասնավորապես՝ քանի՞ ծրագրեր և ի՞նչ աշխատանքներ են իրականացվում, ի՞նչ ուսումնասիրություններ և ստուգայցեր են կատարվել կամ պետք է կատարվեն:

2). Ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ մարզային և համայնքային ճանապարհների գծանշման և կահավորման վերաբերյալ, մասնավորապես՝ ու՞մ կողմից, ե՞րբ են իրականացվել կամ իրականացվելու գծանշումները և կահավորանքները, ո՞ր վայրերում են նախատեսվել, նախկինում արվե՞լ են, թե՝ ոչ, ջնջվե՞լ են, թե՝ ոչ, և՝ ո՞վքեր են պատասխանատու գործընթացի իրականացման համար:

8. Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կ.Ադամյանը ներկայացրեց քաղաքացիական ծառայության օրենսդրությունում կատարված փոփոխությունների, գործուղումների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ տեղեկատվություն:

Մարզպետը հանձնարարեց աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

1) Սահմանված կարգով ներկայացնել իրավական ակտերի ցանկերը՝ ըստ ոլորտների մրցույթների հարցաշարերում ընդգրկելու նպատակով.

2)Անձնական պատասխանատվություն կրել ստորաբաժանումների աշխատակիցների կողմից գործուղումներ մեկնելու, դրանց հիմնավորվածության, արդյունավետության բարձրացման և հաշվետվությունների ներկայացման ուղղությամբ:

9. Մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Ա.Մալոյանը ներկայացրեց տրված հանձնարարականների և աշխատանքների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, որի վերաբերյալ մարզպետը հանձնարարեց՝ քննարկման նպատակով մինչև 29.01.2025թ. ներկայացնել Լոռու մարզպետի հաշվետվության սահիկաշարի նախնական տարբերակը:

10. Լոռու մարզպետի օգնական Հ.Հակոբյանին՝

Շարունակել անցկացնել հանդիպումները ԼՂ-ից տեղահահանված քաղաքացիների հետ, ուսումնասիրել նրանց կողմից բարձրացված խնդիրները, աջակցել դրանց լուծմանը և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2025-01-31 15:33:26 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99